



COVID-19-ի դեմ խթանիչ պատվաստանյութեր

Բարձրացրեք ձեր պաշտպանվածությունը

ԲԱՐՁՐԱՑՐԵՔ ՁԵՐ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՆՐ COVID-19-Ի ԴԵՄ

- COVID-19-ի դեմ թարմացված (երկվալենտ) Pfizer and Moderna պատվաստանյութերը պաշտպանում են COVID-ի սկզբնական՝ բնօրինակ տարբերակից և Omicron-ի տարբեր ենթատեսակներից:
- Թարմացված խթանիչ դեղաչափը ստանալը ուժեղացնում է ձեր դիմադրողականությունը, որը նախորդ պատվաստումից հետո ժամանակի ընթացքում կարող է թուլացած լինել: Սա ձեզ տալիս է ավելի լավ պաշտպանվածություն COVID-ի ամենավատ հետևանքներից:



ԵԹԵ ՁԵՐ ՎԵՐՋԻՆ ԴԵՂԱՉԱՓԸ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՅԵՏՈ ԱՆՑԵԼ Ե ԱՌՆՎԱԶՆ 2 ԱՄԻՍ, ՍՏԱՑԵՔ ԹԱՐՄԱՑՎԱԾ ԽԹԱՆԻՉ ԴԵՂԱՉԱՓԸ ՀԻՄԱ



Խորհուրդ է տրվում մեկ թարմացված (երկվալենտ) խթանիչ դեղաչափ 6 ամսականից 4 տարեկան բոլոր անձանց, մեկ բացառությամբ:

6 ամսականից 4 տարեկան այն երեխաները, որոնք հիմնական շարքն ընդունելիս պատվաստվել են Pfizer պատվաստանյութով, այս պահին իրավասու չեն ստանալ որևէ խթանիչ դեղաչափ:

Հատկապես կարևոր է, որ 65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձինք ստանան խթանիչ:

- Թարմացված խթանիչը պետք է ստանալ հիմնական շարքի վերջին կան բնօրինակ խթանիչի վերջին դեղաչափն ընդունելուց առնվազն 2 ամիս հետո:
- Խթանիչից առաջացող կողմնակի ազդեցությունները նույնն են, ինչ հիմնական շարքի պատվաստանյութերի կողմնակի ազդեցությունները: Դրանց մեծ մասը լինում է թեթև կամ միջին ծանրության և տևում է 1-2 օր:
- Novavax-ի խթանիչ դեղաչափը հասանելի է 18 տարեկան և ավելի բարձր տարիքի այն անձանց համար, որոնք չեն կարող պատվաստվել Pfizer կամ Moderna պատվաստանյութերով և նախկինում խթանիչ դեղաչափ չեն ստացել: Այն տրվում է հիմնական շարքի պատվաստանյութերն ամբողջությամբ ստանալուց 6 ամիս հետո:
- Դուք կարող եք COVID-ի դեմ պատվաստանյութի հետ **միաժամանակ ստանալ նաև գրիպի դեմ պատվաստանյութ:**

ԽԹԱՆԻՉՆԵՐԸ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՆ ՏՐՎՈՒՄ, ՆՈՒՅՆԻՍԿ ԵԹԵ ԴՈՒՔ ԱՐԴԵՆ ՈՒՆԵՑԵԼ ԵՔ COVID

- **Պատվաստվելը ավելացնում է պաշտպանվածությունը:**
- Սպասեք, մինչև ավարտվի ձեր մեկուսացման շրջանը, որպեսզի ստանաք խթանիչ դեղաչափը: Կարող եք նաև դիտարկել ձեր ախտանիշների առաջանալուց կամ թեստի դրական արդյունք ունենալուց հետո (եթե ախտանիշներ չեք ունեցել) 3 ամիս սպասելը: Հավանական չէ, որ 3 ամսվա ընթացքում դուք նորից կհիվանդանաք COVID-ով: Կարակվելու և պատվաստվելու միջև ավելի երկար ժամանակը կարող է նաև առաջացնել ավելի լավ իմունային արձագանք:



ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐՆ ԱՆՎՃԱՐ ԵՆ. ԴՈՒՔ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՉՈՒՆԵՔ

- Ձեզ չեն հարցնի ձեր ներգաղթի կարգավիճակի մասին:

Ավելին իմանալու համար այցելեք [VaccinateLACounty.com](https://www.vaccinateLACounty.com) կամ գանգահարեք **1-833-540-0473**:

